DOI: 10.54503/1829-4324.2023.2-74

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տաթևիկ Վազգենի Շահինյան

Հոդվածը ստացվել է՝ 06.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 02.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Հանքարդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացումը բարդ հիմնախնդիր է, որը պահանջում է ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական և բնապահպանական ոլորտներին առնչվող առանձին բաղադրիչների ուսումնասիրություն, առկա խնդիրների վեր հանում և լուծում: Այս նպատակով կառավարությունները, ոլորտի պատասխանատուներն ու շահագրգիռ կողմերը մի շարք միջոցառումներ են ձեռնարկում՝ լուծելու ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի, տնտեսաքաղաքական կայունության, ինչպես նաև բնապահպանական ու սոցիալական բնույթի խնդիրները: Փաթեթներն իրենց մեջ ներառում են կայուն ու թափանցիկ օրենսդրական դաշտի ապահովմանը, ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև տեղական համայնքների հետ գործընկերության զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Արդիականություն: Ներկայումս հանքարդյունաբերական ձեռնարկությունների հիմնական նպատակն է մեծացնել հանքային հումքի արտադրության ծավալը՝ միաժամանակ ապահովելով արտադրության շահութաբերությունը և արդյունահանող արդյունաբերության ձեռնարկությունների մրցունակությունը ներքին և արտաքին շուկայում: Օգտակար հանածոների արդյունահանումն ու հանքարդյունաբերության զարգացումը պահանջում են մեծածավալ ներդրումներ և հետգնման երկարատև ընթացք, ուստի ոլորտի համապարփակ ուսումնասիրությունն ու ներդրումային գրավչության բարձրացումը ունեն առաջնային կարևորություն, ինչն էլ պայմանավորում է հետազոտության թեմային արդիականությունը:

Նպատակ: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել զարգացած ու զարգացող հանքարդյունաբերության ոլորտներ ունեցող երկրների կողմից կիրառվող մոտեցումներն ու չափորոշիչները, ներկայացնել ՀՀ-ում դրանց կիրառման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Խնդիրներ: Վերոնշյալ նպատակի իրագործման համար մեր առջև խնդիր ենք դրել.

- ✓ բացահայտել զարգացած ու զարգացող հանքարդյունաբերության ոլորտ ունեցող երկրները,
- ✓ վերլուծել այդ երկրներում հանքարդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված մոտեցումներն ու չափորոշիչները,

✓ հիմնավորել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում դրանց կիրառման կարևորությունը:

Գրականության վերլուծություն: Վերջին 25 տարիների ընթացքում օգտակար հանածոների արդյունահանումն ամբողջ աշխարհում ենթարկվել է լուրջ փոփոխությունների, ինչին մեծապես նպաստել է նոր, բաց տնտեսական համակարգը: Փոփոխություններն ի սկզբանե պայմանավորված էին տեխնոլոգիական նորարարություններով, հանքարդյունաբերության ոլորտի ծրագրերի ֆինանսավորման համար միջազգային կապիտալի ներգրավմամբ, ինչպես նաև տեղական համայնքների և այլ շահագրգիռ կողմերի միջև փոխգործակցության հաստատմամբ[1]: Իսկ ահա վերջին տասնամյակում բնական ռեսուրսներով հարուստ մի շարք զարգացող ու զարգացած երկրներում նկատվել է շեշտակի տնտեսական աճ, ինչը պայմանավորված է եղել նաև զարգացած հանքարդյունաբերության ոլորտով: Հանքարդյունաբերությունը մեծ դեր է խաղում Լատինական Ամերիկայի, մասնավորապես Պերուի, Չիլիի և Բրազիլիայի տնտեսություններում, որտեղ այն կազմում է ՀՆԱ-ի համապատասխանաբար 11.7 %, 9.9 % և 1.2 %-ը, իսկ արտահանման՝ 21 %, 60 % և 46 %-ը[2]:

1994 թվականին այս երկրներից շատերը, միավորվելով ստեղծեցին CRIRSCO (Committee for Mineral Reserves International Reporting Standards) միջազգային կոմիտեն, որի նպատակն էր փոխադարձ վստահության մտնոլորտում մշակել ու ներդնել միասնական մոտեցումների ու չափորոշիչների համակարգ[3]: CRIRSCO-ի չափորոշիչներին համապատասխան հաշվետվությունների ներկայացումը առավել թափանցիկ է դարձնում գործունեության դաշտը, իսկ վերոնշյալ երկրների հանքարդյունաբերական ընկերությունների կողմից ներդրումների ներգրավման գործընթացը դարձնում է ավելի դյուրին:

Կոմիտեի կողմից մշակված հաշվետվությունների ձևաչափը լայնորեն ընդունվել է համաշխարհային հանքարդյունաբերության կողմից՝ որպես երկրաբանական հետազոտությունների, օգտակար հանածոների պաշարների և ակտիվների վերաբերյալ հայտարարագրերի հաշվետվությունների ընդունելի տարբերակ[4]:

Այսպիսով, առավել հստակ պատկերացում կազմելու և հետևություններ անելու համար անհրաժեշտ է համապարփակ կերպով ուսումնասիրել հանքարդյունաբերության ոլորտի ունեցած ազդեցության աստիճանը զարգացած ու զարգացող երկրների տնտեսություններում, CRIRSCO-ի անդամ հանդիսանալու

---

[1] Mining and development, World bank group, Global Trends in the Mining Industry, p. 1, https://documents1.worldbank.org/curated/en/511531468782172927/pdf/313750mining0reform0and0the0wb.pdf , (last access 06.10.23)

[2] Горная промышленность, инновации и экономический рост: опыт развивающихся стран, В.Б. Кондратьев, 2020 стр. 98-104 https://mining-media.ru/images/2020/03_2020/098-104.pdf

[3] CRIRSCO կոմիտեի պաշտոնական կայք–էջ՝ https://www.crirsco.com/ , (վերջին մուտքը 06.10.23)

[4] Д. А. Беспалов, Обоснование применения международных систем оценки месторождений семейства CRIRSCO и JORC при освоении высокогорных месторождений, стр. 23-27

հանգամանքը, ինչպես նաև նրանց կողմից իրականացվող միջոցառումներն ու կիրառվող օրենսդրական գործիքակազմերը:

Մեթոդաբանություն: Սույն հետազոտության շրջանակում օգտագործվել են ընդհանուր գիտական և մասնակի մեթոդներ: Մասնավորապես, գիտական՝ պատմական-տրամաբանական մոտեցումների զուգակցումը, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ մեթոդները:

ICMM-ի (Հանքարդյունաբերության միջազգային խորհուրդ) հանքարդյունաբերության ազդեցության ինդեքսի (MCI) միջոցով ուսումնասիրվել է զարգացած ու զարգացող երկրների ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության ոլորտի ազդեցության աստիճանը[1]:

Վերլուծություն: Հանքարդյունաբերությունը համարվում է աշխարհի հինգերորդ խոշորագույն արդյունաբերությունը և որպես ռեսուրս–ինտենսիվ ու էկոլոգիապես զգայուն արդյունաբերական ճյուղ, այն կարող մեծապես նպաստել երկրների տնտեսական զարգացմանը: Այս համատեքստում, օգտակար հանածոներով հարուստ երկրներում շարունակում են մեծանալ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները: Քանի որ ՕՈՒՆ–ի (օտարերկրյա ուղղակի ներդրումների) գերակշիռ մասը շարունակում է մնալ զարգացած երկրների անդրազգային կորպորացիաներին, այն դեպքում երբ դրանց հիմնական թիրախը զարգացող երկրներն են, զարգացող երկրների կառավարությունները վերջին տարիների ընթացքում սկսել են կիրառել հարկային արտոնություններ, վաճառել պետական հանքերը՝ օտարերկրյա ներդրողներին ներգրավելու նպատակով[2]:

Հանքարդյունաբերության ազդեցության ինդեքսը (MCI), որը մշակվում է Հանքարդյունաբերության ու մետաղների միջազգային խորհրդի (ICMM) կողմից, հնարավորություն է տալիս գնահատել հանքարդյունաբերության դերը ազգային տնտեսություններում՝ հետևյալ չորս ցուցանիշների հաշվարկման միջոցով.

- ✓ Հանքահումքային ռեսուրսների արտահանման մասնաբաժինը,
- ✓ Հանքահումքային ռեսուրսների արտահանման մասնաբաժնի աճը/նվազումը,
- ✓ Հանքահումքային ռեսուրսների արդյունահանման արժեքը՝ հաշվարկված ՀՆԱ-ի նկատմամբ (%),
- ✓ Հանքահումքային ռեսուրսների ռենտան՝ հաշվարկված ՀՆԱ–ի նկատմամբ (%)[3]:

ICMM–ի կողմից մշակված 6-րդ զեկույցի համաձայն 2020 թվականին վարկանշային աղյուսակի առաջին 25 հորիզոնականներում տեղ են գտել այն

---

[1] ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, p. 2 pp. 12

[2] Analysis on Investment Environment of Mining Industry in China, Changhai Wang, Yali Wen, Feng Han, International Conference on Environmental Science and Engineering (ICESE 2011)

[3] ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, p. 2 pp. 12

երկրները, որոնք հիմնականում ունեն ռեսուրսներից կախվածություն: Բացառություն է կազմում միայն Ռուսաստանի Դաշնությանը: Իսկ ահա Հայաստանը զբաղեցնում է 23–րդ հորիզոնականը[1]: Խորհուրդը ներկայացնում է նաև երկրների դասակարգումն ըստ մետաղական հանքանյութերի և ածուխի արդյունաբերության արժեքի:

Ստորև աղյուսակի տեսքով ներկայացնենք ընդհանուր արդյունաբերության արժեքով դասակարգված երկրների առաջին տասնյակը:

Աղյուսակ 1

Երկրների դասակարգումն ըստ արդյունաբերական արժեքի 2020 թ. [2]

Դիրքն ըստ արդյունաբերության արժեքի	*Երկիրը*	*Մետաղական հանքանյութերի և ածուխի արդյունաբերության արժեքը (մլն ԱՄՆ դոլար)*	*MCI ինդեքսը*
1	Չինաստան	217.8	**79**
2	Ավստրալիա	121.0	**15**
3	ԱՄՆ	55.4	**67**
4	Ռուսաստանի Դաշնություն	49.6	**25**
5	Չիլի	44.8	**13**
6	Բրազիլիա	38.3	**30**
7	Կանադա	36.3	**42**
8	Հարավային Աֆրիկա	32.5	**17**
9	Ինդոնեզիա	27.7	**36**
10	Պերու	24.0	**20**

Կարելի է ենթադրել, որ Ռուս–Ուկրաինական հակամարտությունն ու գլոբալ էներգետիկ անցման արագացումն արդեն իսկ մեծ ազդեցություն են ունեցել ամբողջ աշխարհի ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության ոլորտի վրա՝ ի հաշիվ օգտակար հանածոների պահանջարկի աճի: Այնուամենայնիվ ազդեցությունների չափը 2022 թվականի դրությամբ հնարավոր կլինի տեսնել միայն 2024 թվականին, երբ լույս կտեսնի խորհրդի արդեն 7–րդ հրատարակությունը:

Հանքարդյունաբերությունը համարվում է բարձր ռիսկային ոլորտ, ինչը մեծամասամբ պայմանավորված է անորոշություններով, որոնք ոլորտային ընկերություններին ուղեկցում են հանքահումքի արդյունահանման բոլոր փուլերում: Այդ իսկ պատճառով երկրների կառավարությունները ձեռնարկում են բազմապիսի միջոցառումներ՝ նպատակ ունենալով խթանել հանքարդյունաբերության ոլորտի ներդրումները: Այնուամենայնիվ, եթե միջոցառումները մանրակրկիտ

[1] ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, p. 5 pp. 15

[2] ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, p. 7

մշակված չեն, ապա խաթարվում է ոլորտի արդյունավետ գործունեությունը: Արդյունքում նույնիսկ օգտակար հանածոներով հարուստ երկրները ոչ միշտ են տնտեսապես զարգացած, չունեն զարգացած հանքարդյունաբերության ոլորտ և ունեն բնակչության աղքատությունը նվազեցնելու խնդիր: Այս մասին են վկայում ինչպես ICMM–ի զեկուցները, այնպես էլ մեր կողմից նախկինում իրականացված վերլուծությունները[1]:

Հանքարդյունաբերական ոլորտում ներդրումային միջավայրի գնահատման համար հաշվի են առնվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ում է պատկանում հանքավայրը, ինչպիսի լիցենզիոն թույլտվություններ ունի, ինչ հարկեր ու հարկային դրույքաչափեր են կիրառվում տվյալ երկրում օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում, բանկային համակարգի գործունեությունն ու ստացվող շահույթը երկրից դուրս հանելու հնարավորությունները: Մեծ ուշադրություն է դարձվում նաև շրջակա միջավայրի պահպանության ու սոցիալական պատասխանատվության հիմնահարցերին[2]:

Հանքարդյունաբերական ընկերություններում հանքահումքային ակտիվների վիճակի գնահատումը՝ նախքան դրանց մուտքը IPO (Նախնական հրապարակային տեղաբաշխում), իրականացվում է հանքարդյունաբերական ընկերության կողմից մշակված՝ օգտակար հանածոների և պաշարների մասին հայտարարության հիման վրա:

Համաշխարհային պրակտիկայում, դեպքերի ճնշող մեծամասնությունում, նման հաշվետվությունները կազմվում են ազգային (տարածաշրջանային) դրույթները համապատասխանեցնելով «Հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտե»-ի՝ CRIRSCO–ի կողմից մշակված չափորոշիչներին, քանի որ դրանք համաշխարհային հանքարդյունաբերության բիզնեսի կողմից ընդունվում են որպես միջազգային ստանդարտներ[3]: Կոմիտեի չափորոշիչներին համապատասխանող հաշվետվողականության համակարգերից է օրինակ Ավստրալասիական JORC համակարգը (The Australasian Code for Reporting of Exploration Results, Mineral Resources and Ore Reserves):

Կոմիտեի կողմից մշակված չափորոշիչների համաձայն՝ հաշվետվությունները պետք է կազմվեն հետևյալ սկզբունքների հիման վրա.

- Թափանցիկությունը, ինչը ենթադրում է հաշվետվությունների օգտատերերին բավարար հստակ և միանշանակ տեղեկատվության տրամադրումը՝ ապահովելով վերջինիս մատչելիությունը:

---

[1] Հանքարդյունաբերության դերը երկրների տնտեսության մեջ, Տ. Շահինյան, 2023, https://arar.sci.am/dlibra/publication/390618/edition/361330

[2] Mineral exploration and development: Risk and reward, Roderick G. Eggert, https://www.miningnorth.com/_rsc/site-content/library/education/Mineral_Exploration_&_Development_Roderick_Eggert_Eng.pdf , (last access 06.10.23)

[3] Руководство по гармонизации стандартов отчетности Республики Казахстан и CRIRSCO, https://ponen.kz/download/files/rukovodstvo_po_garmonizacii_standartov_otchetnosti.pdf

- Նշանակալիությունը, ինչը ենթադրում է, որ հաշվետվությունները պետք է պարունակեն ներդրողների և նրանց մասնագետ–խորհրդատուների կողմից պահանջվող ամբողջական տեղեկատվությունը՝ իրենց իսկ կողմից ներկայացված պահանջների համապատասխան, ինչն իրենց թույլ կտա հանքահումքային ռեսուրսների վերաբերյալ հավասարակշռված ու ճշգրիտ դատողություններ անել:
- Իրավասությունը, ինչը ենթադրում է, որ հաշվետվությունը պետք է հիմնված լինի աշխատանքի արդյունքների վրա, որոնց համար պատասխանատու են համապատասխան մակարդակի որակավորում և փորձ ունեցող մասնագետներ[1]:

Սրանք այն նվազագույն սկզբունքներն են, որոնք մեծապես օգնում են ներդրողներին, նրանց ապահովելով հասանելիություն անհրաժեշտ տեղեկատվությանը, ինչպես նաև ձևավորում են թափանցիկ ու վստահելի ներդրումային միջավայր:

Հայաստանի Հանրապետությունում օգտակար հանածոների պաշարների գնահատման հաշվետվողականության համակարգի հիմքում ընկած են խորհրդային ժամանակներում կիրառվող համակարգի սկզբունքներն ու չափորոշիչները: ՀՀ-ում գործող մեթոդաբանության պահանջները, էապես տարբերվում են CRIRSCO –ի սկզբունքներից ու չափորոշիչներից և չեն ընկալվում միջազգային ներդրողների ու ֆինանսական կազմակերպությունների կողմից[2]: Թերևս սա պատճառներից հիմնականն է, որ ՀՀ–ն, ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության դերին վերաբերող վարկանշային աղյուսակի 23-րդ հորիզոնականը զբաղեցնելով, չունի բավականաչափ զարգացած հանքարդյունաբերության ոլորտ ու տնտեսական զարգացվածության բավարար մակարդակ: Կոմիտեի անդամ չհանդիսանալը մեծապես ազդում է ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության վրա, իսկ դաշտում առկա բացթողումները պայմանավորում են իրականացված ներդրումների նվազ արդյունավետությունն ու միջազգային ընկերությունների գործունեության համար խոչընդոտների առկայությունը:

Ներկայումս CRIRSCO–ին անդամակցում են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ավստրալիան, Բրազիլիան, Կանադան, Չիլին, Կոլումբիան, Եվրոպան, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Ղազախստանը, Մոնղոլիան, Ռուսաստանը, Հարավային Աֆրիկան, Թուրքիան և ԱՄՆ–ը[3]:

Կարելի է նկատել, որ թվարկված երկրների մեծ մասը առաջատար դիրքեր են զբաղեցնում ինչպես ընդհանուր արդյունաբերության արժեքով դասակարգված

---

[1] Руководство по гармонизации стандартов отчетности Республики Казахстан и CRIRSCO, https://ponen.kz/download/files/rukovodstvo_po_garmonizacii_standartov_otchetnosti.pdf

[2] Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն, հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, Երևան 2022, էջ 42

[3] CRIRSCO կոմիտեի պաշտոնական կայք–էջ՝ https://www.crirsco.com/, (վերջին մուտքը 06.10.23)

երկրների վարկանշային աղյուսակում, այնպես էլ ունեն մետաղական հանքանյութերի և ածուխի արդյունաբերության բարձր արժեք (Աղյուսակ 1.)։

Ամփոփելով իրականացված ուսումնասիրությունը, կարելի է փաստել, որ CRIRSCO–ին անդամացումն է տվյալ երկրների հանքարդյունաբերության ոլորտներում իրականացված մեծածավալ ու նպատակային արտաքին ներդրումների գրավականը, քանի որ հանքահումքային ռեսուրսների արդյունահանումն ու ոլորտի զարգացումն անհնար է ապահովել առանց ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման ու մեծածավալ ներդրումների ներգրավման։

Գիտական նորույթը: Իրականացված վերլուծությունների արդյունքում հիմնավորվում է ոլորտային հաշվետվությունների նոր չափորոշիչների սահմանման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի անդամակցումը «Հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտե»-ին։

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները: Վերոնշյալ հետազոտությունը կարող է օգտակար լինել ինչպես ոլորտի պատասխանատուներին, այնպես էլ ոլորտով հետաքրքրված հետազոտողներին՝ օգնելով հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ ճիշտ պատկերացումներ կազմելուն ու ոլորտի զարգացման, ներդրումային գրավչության բարձրացման համար թիրախային որոշումներ կայացնելուն։

Եզրակացություններ: Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ օգտակար հանածոներով հարուստ երկրները ևս բավարար չափով տնտեսապես զարգացած չեն, չունեն զարգացած հանքարդյունաբերության ոլորտ, իսկ բնակչության աղքատության նվազեցման հիմնախնդիրը շարունակում է մնալ երկրների կառավարությունների ուշադրության կենտրոնում։

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացումն ու ներդրումային գրավչության բարձրացումը մեծապես կախված են հանքարդյունաբերության ոլորտի ու հանքահումքային ռեսուրսների վերաբերյալ հաշվետվությունների միջազգային չափորոշիչների ներդրմանը, ինչպես նաև համաշխարհային տնտեսության կողմից ներկայացվող մոտեցումների մշակմամբ՝ հետևողական կերպով ապահովելով Հայաստանի Հանրապետության անդամակցումը «Հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտե»-ին։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանքարդյունաբերության դերը երկրների տնտեսության մեջ, Տ. Շահինյան, 2023, https://arar.sci.am/dlibra/publication/390618/edition/361330
2. Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, Երևան 2022, էջ 42

3. Горная промышленность, инновации и экономический рост: опыт развивающихся стран, В.Б. Кондратьев, 2020 стр. 98-104 https://mining-media.ru/images/2020/03_2020/098-104.pdf
4. Обоснование применения международных систем оценки месторождений семейства CRIRSCO и JORC при освоении высокогорных месторождений, Д. А. Беспалов, стр. 23-27 , https://www.sibran.ru/upload/iblock/f39/f391cd6028ceb842bcc04fe5d0f56935.pdf
5. Руководство по гармонизации стандартов отчетности Республики Казахстан и CRIRSCO, https://ponen.kz/download/files/rukovodstvo_po_garmonizacii_standartov_otchetnosti.pd
6. Analysis on Investment Environment of Mining Industry in China, Changhai Wang, Yali Wen, Feng Han, International Conference on Environmental Science and Engineering (ICESE 2011)
7. ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, pp. 15
8. ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, pp. 12
9. Mineral exploration and development: Risk and reward, Roderick G. Eggert, https://www.miningnorth.com/_rsc/site-content/library/education/Mineral_Exploration_&_Development_Roderick_Eggert_Eng.pdf
10. Mining and development, World bank group, Global Trends in the Mining Industry, p. 1, https://documents1.worldbank.org/curated/en/511531468782172927/pdf/313750mining0reform0and0the0wb.pdf
11. CRIRSCO կոմիտեի պաշտոնական կայք–էջ՝ https://www.crirsco.com/

References

1. Hanqardyownaberowt'yan dery' erkrneri tntesowt'yan mej, T. Shahinyan, 2023, https://arar.sci.am/dlibra/publication/390618/edition/361330
2. Hanqardyownaberowt'yan olorti zargacman r'azmavarowt'yown, hayastani tarac'qayin zargacman himnadram, Er&an 2022, e'j 42
3. Gornaja promyshlennost', innovacii i jekonomicheskij rost: opyt razvivajushhihsja stran, V.B. Kondrat'ev, 2020 str. 98-104 https://mining-media.ru/images/2020/03_2020/098-104.pdf
4. Obosnovanie primenenija mezhdunarodnyh sistem ocenki mestorozhdenij semejstva CRIRSCO i JORC pri osvoenii vysokogornyh mestorozhdenij, D. A. Bespalov, str. 23-27, https://www.sibran.ru/upload/iblock/f39/f391cd6028ceb842bcc04fe5d0f56935.pdf
5. Rukovodstvo po garmonizacii standartov otchetnosti Respubliki Kazahstan i CRIRSCO, https://ponen.kz/download/files/rukovodstvo_po_garmonizacii_standartov_otchetnosti.pd

6. Analysis on Investment Environment of Mining Industry in China, Changhai Wang, Yali Wen, Feng Han, International Conference on Environmental Science and Engineering (ICESE 2011)
7. ICMM; Mining with Principles, Mining Contribution Index (MCI), 2022, 6th Edition, pp. 15
8. ICMM; Mining with Principles, Role of mining in national economies, Mining Contribution Index (MCI) 5th Edition, December 2020, pp. 12
9. Mineral exploration and development: Risk and reward, Roderick G. Eggert, https://www.miningnorth.com/_rsc/site-content/library/education/Mineral_Exploration_&_Development_Roderick_Eggert_Eng.pdf
10. Mining and development, World bank group, Global Trends in the Mining Industry, p. 1, https://documents1.worldbank.org/curated/en/511531468782172927/pdf/313750mining0reform0and0the0wb.pdf
11. CRIRSCO komitei pashtonakan kayq–e'j` https://www.crirsco.com/

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տաթևիկ Վազգենի Շահինյան

Համառոտագիր: Հանքարդյունաբերությունը համարվում է բարձր ռիսկային ոլորտ, որը մշտապես գտնվում է երկրների կառավարությունների ուշադրության կենտրոնում: Վերջիններիս կողմից ձեռնարկվում են բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը, թափանցիկ օրենսդրական դաշտի ապահովմանն ու ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու հնարավորությունների ստեղծմանը:

Օգտակար հանածոների արդյունահանումն ու հանքարդյունաբերության զարգացումը պահանջում են մեծածավալ ներդրումներ և հետգնման երկարատև ընթացք, ուստի ոլորտի համապարփակ ուսումնասիրությունն ու ներդրումային գրավչության բարձրացումը ունեն առաջնային կարևորություն, ինչն էլ պայմանավորում է հետազոտության թեմային **արդիականությունը:**

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել զարգացած ու զարգացող հանքարդյունաբերության ոլորտներ ունեցող երկրների կողմից կիրառվող մոտեցումներն ու չափորոշիչները, ներկայացնել ՀՀ-ում դրանց կիրառման անհարժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Հետազոտության ընթացքում խնդիր է դրվել բացահայտել զարգացած ու զարգացող հանքարդյունաբերության ոլորտ ունեցող երկրները, վերլուծել այդ երկրներում հանքարդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության

բարձրացմանն ուղղված մոտեցումներն ու չափորոշիչները՝ հիմնավորելով ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում դրանց կիրառման կարևորությունը:

Օգտագործվելով գիտական՝ պատմական-տրամաբանական մոտեցումների զուգակցումը, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ **մեթոդները** ուսումնասիրվել են զարգացած հանքարդյունաբերության ոլորտներ ունեցող երկրների կողմից ոլորտի զարգացմանն ու ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված մոտեցումները:

Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում առաջարկվում է ներդնել հանքարդյունաբերության ոլորտի ու հանքահումքային ռեսուրսների վերաբերյալ հաշվետվությունների միջազգային չափորոշիչների, ինչպես նաև ապահովել Հայաստանի Հանրապետության անդամակցումը «Հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտե»-ին (CRIRSCO):

Վերլուծությունների արդյունքում **ստացվել է հետևյալ գիտական նորույթը.** Իրականացված վերլուծությունների արդյունքում հիմնավորվում է ոլորտային հաշվետվությունների նոր չափորոշիչների սահմանման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի անդամակցումը «Հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտե»-ին:

Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել ինչպես ոլորտի պատասխանատուներին, այնպես էլ ոլորտով հետաքրքրված հետազոտողներին՝ օգնելով հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ ճիշտ պատկերացումներ կազմելուն ու ոլորտի զարգացման, ներդրումային գրավչության բարձրացման համար թիրախային որոշումներ կայացնելուն:

Բանալի բառեր. օգտակար հանածոներ, հանքարդյունաբերության ոլորտ, ներդրումներ, ներդրումային գրավչություն, MCI ինդեքս, արդյունաբերական արժեք, հաշվետվողականություն, CRIRSCO–ի կոմիտե:

ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ ПРИВЛЕКАТЕЛЬНОСТИ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ

Татевик Вазгеновна Шагинян

Аннотация. Горнодобывающая промышленность считается отраслью повышенного риска, которая всегда находится в центре внимания правительств стран. Последние принимают множество мер, направленных на развитие горнодобывающей отрасли, обеспечение прозрачной правовой базы и создание возможностей для инвестиций.

Добыча полезных ископаемых и развитие горнодобывающей промышленности требуют масштабных инвестиций и длительного процесса окупаемости, поэтому

комплексное изучение отрасли и повышение инвестиционной привлекательности имеют первостепенное значение, **что и определяет актуальность темы исследования.**

Цель статьи – изучить подходы и стандарты, используемые странами с развитой и развивающейся горнодобывающей промышленностью, представить необходимость и целесообразность их применения в РА.

В ходе исследования была поставлена задача - выявить страны с развитой и развивающейся горнодобывающей промышленностью, проанализировать подходы и стандарты, направленные на повышение инвестиционной привлекательности горнодобывающей отрасли в этих странах, обосновать важность их применения в горнодобывающей промышленности РА.

Используя сочетание научных, историко-логических подходов, а также аналитико-синтетических методов, изучены подходы к развитию отрасли и повышению инвестиционной привлекательности стран с развитой горнодобывающей промышленностью.

В результате исследований и анализа предлагается внедрить международные стандарты отчетности для горнодобывающей отрасли и минеральных ресурсов, а также обеспечить членство Республики Армения в «Комитете по международным стандартам отчетности о запасах твердых полезных ископаемых (CRIRSCO)».

Научная новизна. В результате проведенных анализов обоснована необходимость определения новых стандартов отраслевых отчетов, а также членство Армении в «Комитете по международным стандартам отчетности о запасах твердых полезных ископаемых».

Полученные результаты могут быть полезны как руководителям отрасли, так и заинтересованным в отрасли исследователям, помогая сформировать правильное представление о горнодобывающей отрасли и принять целенаправленные решения по ее развитию и повышению инвестиционной привлекательности.

Ключевые слова: полезные ископаемые, горнодобывающий отрасль, инвестиции, инвестиционная привлекательность, индекс MCI, промышленная ценность, подотчетность, комитет CRIRSCO.

THE PROBLEMS OF INCREASING THE INVESTMENT ATTRACTIVENESS OF THE MINING INDUSTRY

Tatevik Vazgen Shahinyan

Abstract. The mining industry is considered a high-risk sector, which is always at the center of attention of the governments of countries. The latter are undertaking many measures aimed at the development of the mining industry, ensuring a transparent legislative framework and creating opportunities for investing in infrastructure.

Extraction of minerals and development of the mining industry require large-scale investments and a long payback process, therefore comprehensive study of the sector and increase of investment attractiveness have primary importance, **which determines the relevance of the study.**

The purpose of the article is to study the approaches and standards used by countries with developed and developing mining industries, to present the necessity and appropriateness of their application in RA**.**

In the scope of the article, the task was set to identify the countries with developed and developing mining industries, to analyze the approaches and standards aimed at increasing the investment attractiveness of the mining industry in those countries, justifying the importance of their application in the mining industry of Armenia. **Using the combination of scientific, historical-logical approaches, as well as analytical-synthetic methods**, the approaches to the development of the sector and increasing the investment attractiveness of the countries with developed mining industries were studied.

As a result of studies and analyses, it was proposed to introduce international reporting standards for the mining industry and mineral resources, as well as ensure the membership of the Republic of Armenia in the "Committee for Mineral Reserves International Reporting Standards" (CRIRSCO).

The following scientific novelty was obtained in the scope of the article: as a result of the conducted analyses, the need to define new standards for sectoral reports is justified, as well as Armenia's membership in the "Committee for Mineral Reserves International Reporting Standards" is substantiated.

The obtained results can be useful both to the managers of the sector and to the researchers interested in the sector, by helping to form the correct understanding of the mining industry and to make targeted decisions for the development of the sector and the increase of investment attractiveness.

Keywords: Minerals, mining sector, investments, investment attractiveness, MCI index, industrial value, accountability, CRIRSCO Committee.